ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3.
Հեռ.(011) 52-65-63 (011) 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

07/24.2/6798-16
08.11.16թ.

Ձեր №
առ

<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ> ՀԿ

ՆԱԽԱԳԱՀ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
(ՀՀ քաղաք Երևան Բուզանդի 1/3 4 հարկ)

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2016 թվականի նոյեմբերի 2-ի N 305-ի 5 գրության հայտնում եմ, որ երկրաբանական ֆոնդում առկա տեղեկատվությունը թվայնացվում է «Վի Իքս Սոֆթ» ընկերության հետ կնքված «ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/6-16/23» ծածկագրով պայմանագրի շրջանակներում, որի ֆինանսավորումն իրականացվում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ: Ստորև ներկայացնում ենք Ձեր կողմից բարձրացված հարցերի պատասխանները՝

1.Համաձայն պայմանագրի թվայնացման աշխատանքները սկսվել են 2016 թվականի մայիսի 18-ին և առ 2016 թվականի հոկտեմբերի 31-ը թվայնացվել է ծրագրով նախատեսված նյութերի 51.27%-ը: Թվայնացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակված է https://www.geo-fund.am կայքում:

2.Ծրագրով նախատեսված է վերապատրաստել երկրաբանական ֆոնդի չորս աշխատակից՝ ծրագրի ավարտից հետո անհրաժեշտ թվայնացման աշխատանքներն ինքնուրույն իրականացնելու համար: 2016 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ վերապատրաստվել է ֆոնդի չորս աշխատակից՝ Սուրեն Հակոբյանը, Անուշ Եսայանը, Վերոնիկա Զախարյանը և Լիանա Խառատյանը, որոնցից երկուսը՝ հաշվետվությունների թվայնացման մասնագիտացմամբ, մեկը՝ լայնաֆորմատ քարտեզների թվայնացման մասնագիտացմամբ և մեկ աշխատակից թվայնացված նյութերը կայքէջ մուտքագրման ու հրապարակման մասնագիտացմամբ: Նշված աշխատակիցների ուսուցումն իրականացվում է թվայնացման աշխատանքներին անմիջական մասնակցության մեթոդով (on the job training):

3.Հանրային իրազեկման միջոցառումները նախատեսված է անցկացնել կայքի գործարկվելուց հետո, ուստի 2016 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ հանրային իրազեկման արշավի միջոցառումներ դեռևս չեն իրականացվել: Նախատեսված են մի շարք

միջոցառումներ, այդ թվում բուկլետների տպագրություն և հրապարակում: Նշված միջոցառումները կիրականացվեն ծրագրի ամբողջ ընթացքի ժամանակ:

4.Կայքէջը գործարկվել է 2016 թվականի հոկտեմբերին և այն հասանելի է https://www.geo-fund.am հասցեով: Կայքի բովանդակությունը շարունակական ավելացվում է և այն ամբողջությամբ պատրաստ կլինի ծրագրով ստանձված պարտավորությունների ժամկետներում:

5.Ծրագիրը իրականացվում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության և ՀՀ կառավորության համատեղ ֆինանսավորմամբ: Երկրաբանական ֆոնդում առկա տեղեկատվությունը թվայնացվում է «Վի Իքս Սոֆթ» ընկերության հետ կնքված «ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/6-16/23» ծածկագրով պայմանագրի շրջանակներում, որի ֆինանսավորումն ամբողջությամբ իրականացվում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ:

Պայմանագրով ծրագրի իրականացման համար 2016-2017 թվականների համար հատկացված է 82,500,000 (ութսուներկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 38,775,000 (երեսունութ միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամը նախատեսված է 2016 թվականի համար և առ 2016թվականի հոկտեմբերի 31-ը ծախսվել է 29,235,000 (քսանինը միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ: ՀՀ կառավարությունը ծրագրի համաֆինանսավորման (in kind) նպատակով տրամադրում է գույքային և նյութատեխնիկական աջակցություն (տարածք, կահավորում, կապ, կոմունալ վճարումներ և այլն):

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատարող՝ Վարդան Վարդանյան
Հեռ 011-32-32-72